ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի նոյեմբերի 6-7-ը

Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ)

գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Մեխակ Ապրեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ), 2017 թվականի նոյեմբերի 6-7-ը:

4. **Գործուղման նպատակը՝**

   VFS GLOBAL ընկերության կողմից կազմակերպված IConnect ամենամյա աշխատաժողովին մասնակցություն:

5. **Քննարկված թեմաները՝**

   Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները՝

   - արտոնագրային ծառայությունները,
   - միգրացիայի կառավարումը,
   - Թվային փոխակերպումը՝ կապված հանրային ծառայությունների ոլորտում թվային միջավայրի աճող դերակատարության հետ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

   Աշխատաժողովին մասնակցելու էին եկել 55 երկրներից պետական և մասնավոր հատվածներից 129 ներկայացուցիչներ:

   Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ:

   - VFS Global ընկերության գլխավոր տնօրեն Զուբին Կարկարիայի,
   - VFS Global ընկերության ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի տնօրեն Պրաբուդդա Սենի,
   - VFS Global ընկերության Հարավային Ասիայի տարածաշրջանի տնօրեն Ալոկ Սինգհալի,

- VFS Global ընկերության Ձեռնարկատիրության զարգացման հարցերով ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մենեջեր Վիվեկ Շարմայի,
- VFS. Global ընկերության ձեռնարկատիրության զարգացման և քաղաքացիներին ծառայությունների հարցերով ավագ մենեջեր Այման Ալշրահիդեի,
- Արաբական Միացյալ Էմիրությունների մամուլի ազգային խորհրդի գլխավոր տնօրեն Ալ Մանսուրի,
- Հնդկաստանում Դոմինիկյան Հանրապետության դեսպան և դիվանագիտական կորպուսի ղեկավար Հանս Դաննենբերգի,
- Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության ներքին և արտաքին ծառայությունների ղեկավար, դեսպան Լաուրի Աալտոնենի,
- Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության տեղեկատվության և փաստաթղթավորման հարցերով տնօրեն Արի Ուուրսիկարտանոյի,
- Միացյալ թագավորության կիբեր անվտանգության ազգային կենտրոնի տնօրեն Ջոն Նոբելի,
- Էստոնիայի ոստիկանության և սահմանային ծառայության “e-Residency” ծրագրի կառավարման հարցերով տնօրեն Մաի Սելկեի,
- Ուկրաինայի արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայությունների գլխավոր տնօրենի տեղակալ Ռոման Նեդիլսկի,
- Կիևի տարածքային իրավաբանական գլխավոր վարչության պետ Ստանիսլավ Կուցենկոյի,
- “Dubai Silicon Oasis”-ի գլխավոր տնօրենի տեղակալ Ջումա Ալ Մատրուշի հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատաժողովի ընթացքում VFS Global ընկերության գլխավոր տնօրեն Զուբին Կարկարիայի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց նախնական փուլում քննարկել համագործակցության հետևյալ ուղղությունները

- VFS Global ընկերության հետ համագործակցության և կարողությունների օգտագործմամբ Հայաստանի համար նպատակային շուկա հանդիսացող երկրներում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների բացում և գործարկում,
- VFS Global ընկերության IConnect հաջորդ տարեկան աշխատաժողովի կազմակերպում Հայաստանում:

8. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Մեխակ Ապրեսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

4 դեկտեմբերի, 2017թ.: